# Հաշիվ ապրանքագիր
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 8 | Նոյեմբեր | 2016 թ. |
| **[4] Մատուցման ամսաթիվը** | | |
| 8 | Նոյեմբեր | 2016 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 2384151017 |
| **Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի** | |
| Սերիա | Համար |
| | |
| **Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ** | |
| | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | | |

**[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)**
HYUNDAI Elantra 020 01 Հարկվում է արտոնագրային վճարով

| Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի | | |
|---|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 1 8 3 4 9 5 9 | |
| [9] Անվանումը | ՄԱԳԱՍ ԻՆՎԵՍՏ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) | |
| [10] Բանկային տվյալները | "Կոնվերսբանկ" ՓԲԸ Ավանի մասն. | N 1930012214750100 |
| [11] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՂԵԳՆԱՁՈՐ Գ. Մալիշկա 1 | |
| [12] Լրացուցիչ տվյալներ | | |

| Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի | | | |
|---|---|---|---|
| [13] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 0 0 1 8 3 5 7 | | |
| [14] Անվանումը | ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) | | |
| [15] Բանկային տվյալները | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | N 900011179083 | |
| [16] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ Բաղրամյան 10 | | |
| [17] Լրացուցիչ տվյալներ | | | |
| [18] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | Անուշավան Կուրեղյան |
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | 7 Նոյեմբեր, 2016 թ. |

**[19] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը**

| NN Ը/Կ | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափի միավորը | Ընդհանուր ծավալը կամ ժամանակաչափ քանակը | Միավորի գինը | Արժեքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Ետնի ազդանշանային համակարգի փոխում | հատ | 1 | 15000 | 15000 |
| Ընդամենը | | | | | 15000 |

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ KESOYAN RAZMIK 2208930479
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

08/11/2016 12:10:44

01834959
"ՄԱԳԱՍ ԻՆՎԵՍՏ"
"МАГАС ИНВЕСТ"
"MAGAS INVEST"

Տնօրեն՝ Ա. Հարությունյան

Ապրանքների մատակարարման հարկային հաշիվ — Ա6052999125

## Հարկային հաշիվ
(ապրանքների մատակարարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 8 | Նոյեմբեր | 2016 թ. |
| **[4] Մատակարարման ամսաթիվ** | | |
| 8 | Նոյեմբեր | 2016 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Ա | 6052999125 |

Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X») | հատուկ

Ճշգրտվող հաշվի: Սերիա | Համար

Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար | |
|---|---|---|---|
| | | | [7] |
| | | | [8] |
| | | | [9] |

[10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

### Ապրանքներ մատակարարող (առաքող) անձի

| | |
|---|---|
| [11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 1 8 3 4 9 5 9 |
| [12] Անվանումը | ՄԱԳԱՍ ԻՆՎԵՍՏ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) |
| [13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 1 8 3 4 9 5 9 / 1 |
| [14] Բանկային տվյալները | Կոնվերսբանկ ՓԲԸ — N 1930012214750100 |
| [15] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՂԵԳՆԱՁՈՐ Գ. Մայիսյա 1 |
| [16] Վայրը, որտեղից ապրանքները մատակարարվում են | գ. Առինջ,Երևան-Սևան մայրուղու աջակողմյան հատված |
| [17] Լրացուցիչ տվյալներ | |

### Ապրանքներ ձեռք բերող անձի

| | |
|---|---|
| [18] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 0 0 1 8 3 5 7 |
| [19] Անվանումը | ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) |
| [20] Բանկային տվյալները | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն — N 900011179083 |
| [21] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ Բաղրամյան 10 |
| [22] Լրացուցիչ տվյալներ | |

| [23] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | Անուշավան Կուրեղյան |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | 7 Նոյեմբեր, 2016 թ. |

| | |
|---|---|
| [24] Ապրանքների մատակարարման (առաքման) եղանակը | Մատակարարման վայրում՝ առձեռն (գնորդի միջոցով) |
| [25] Մատակարարվող (առաքվող) ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ՀՀ, Կոտայքի մարզ,գ.Առինջ (Երևան-Սևան մայրուղու աջակողմյան հատված) |

[26] Մատակարարվող ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ապրանքի անվանումը | Չափման միավորը | Քանակը | Միավորի գինը | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումար | Ընդամենը | Այդ թվում՝ ակցիզ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Ետնի ազդանշանային համակարգ | հատ | 2 | 25000 | 50000 | 20 | 10000 | 60000 | |
| Ընդամենը | | | | | 50000 | X | 10000 | 60000 | |

Դուրս գրող՝ KESOYAN RAZMIK 2208930479
անունը, ազգանունը

01834959
"ՄԱԳԱՍ ԻՆՎԵՍՏ"
"МАГАС ИНВЕСТ"
"MAGAS INVEST"

Ստացող

պաշտոնը  ստորագրությունը  (անունը, ազգանունը)

պաշտոնը  ստորագրությունը  (անունը, ազգանունը)

08/11/2016 12:08:51

Տնօրեն՝ Ա. Հարությունյան

# ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 01/07/1

գ.Առինջ 01 հուլիսի 2015թ.

ՀՀ Սահմանադրական Դատարանը՝ ի դեմս. ղեկավար Ա. Հակոբյանի, այսուհետ՝ Պատվիրատու, մի կողմից և «Մագաս Ինվեստ» ՓԲ ընկերությունը, ի դեմս տնօրեն՝ Ա.Հարությունյանի, որը գործում է «Մագաս Ինվեստ» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում, Պատվիրատուի կողմից ներկայացրած ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման և ապրանքների մատակարարման պարտավորությունը (այսուհետև՝ Ապրանք, Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ապրանքը և Ծառայության արդյունքը և վարձատրել դրա համար համաձայն Կատարողի կողմից դուրսգրած ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաշվարկային փաստաթղթերի (հարկային հաշվի, հաշիվ-պպրանքագրի և (կամ) այլ հաշվարկային փաստաթղթեր):

1.2 Ապրանքի մատակարարման և Ծառայության մատուցման ժամկետն է պայմանագրի ուժի մեջ մտնելուց մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Չընդունել Ծառայության արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ, իսկ Պատվիրատուի կողմից Ծառայության մատուցման ժամկետը խախտելու կամ Ծառայությունը ողջամիտ ժամկետում չիրականացնելու դեպքում առանց Ծառայության արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3Եթե հանձնված է անպատշաճ որակի ապրանք, իր ընտրությամբ պահանջել՝
ա) համաչափ պակասեցնելու ապրանքի գինը.
բ) ողջամիտ ժամկետում անհատույց վերացնելու ապրանքի թերությունները.
գ) հատուցելու ապրանքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսեր.

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Ընդունել մատուցված Ծառայության արդյունքը, իսկ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կատարողին :

2.2.2 Ծառայության արդյունքն և մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթական գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5-րդ գլխով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Մինչև Ծառայության արդյունքը և մատակարարվող Ապրանքն Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մատուցված Ծառայության և մատակարարված Ապրանքին համարժեք գինը:

2.3.2 Պտվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 5-րդ գլխով կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը և Ապրանքների մատակարարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել պատվիրատուին պատճառված վնասները:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը Ծառայության մատուցման ավարտից և Ապրանքների մատակարարումից անմիջապես հետո Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության և մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հաշվարկային փաստաթղթի ((հաշիվ-ապրանքագիրի, հարկային հաշվի և (կամ) այլ հաշվարկային փաստաթղթերի) երկու (ական) օրինակ:

3.2 Պատվիրատուն նույն օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված մեկ (ական) օրինակը կամ Ծառայությունը և /կամ/ Ապրանքը չընդունելու պատճառաբանված գրավոր մերժումը:

3.3 Կատարողի մատուցած Ծառայության արդյունքը և մատակարարված Ապրանքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում հաշվարկային փաստաթղթերը ստորագրելու պահից:

## 4.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցած Ծառայության և մատակարարված Ապրանքի դիմաց պատվիրատուն վճարում է Կատարողի կողմից դուրս գրած հաշվարկային փաստաթղթերի (հաշիվ-ապրանքագրի, հարկային հաշվի և (կամ) այլ հաշվարկային փաստաթղթեր) հիման վրա, որոնք հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

4.2 Ծառայությունների մատուցման և մատակարարված Ապրանքի գինը ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը, տուրքերը և այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.3 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության և մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով և (կամ) կանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի դրամարկղ վճարելու միջոցով՝ հաշվարկային փաստաթղթերի ստորագրմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության և մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,05%-ի չափով:

5.3 Սույն պայմանագրի 5.2 կետերով նախատեսված տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայության մատուցելու և մատակարարված Ապրանքի արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.4 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված ժամկետի խախտման, ինչպես նաև մատուցված Ծառայության և մատակարարված Ապրանքի արդյունքը անհիմն չընդունելու համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.5 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տուգանքի տույժի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6.ԱՆՀԱՂԹԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսին իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը , քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանգիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն պայմանգիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

Սույն պայմանգրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության : Սույն պայմանգրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.2 Սույն պայմանագիրը կարող է մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

7.3 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման և Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը՝ սույն պայմանագրի կողմերից որևէ մեկի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով , որ՝ դիմացի կողմը առարկություններ չունի:

7.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.6 Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Կ ա տ ա ր ո ղ | Պ ա տ վ ի ր ա տ ու |
|---|---|
| «Մագաս Ինվեստ» ՓԲԸ | ՅՅ Սահմանադրական Դատարան |
| ՀՎՀՀ 01834959, ԱԱՀՎՀՀ 01834959/1 | ՀՎՀՀ 00018357 |
| Հասցե՝ ՀՀ, Վայոց Ձորի մ., գ. Մալիշկա | ՀՀ. ք. Երևան, Բաղրամյան 10 |
| Գործ.հասցե՝ ՀՀ, Կոտայքի մ., . Առինջ, /Երևան-Սևան մայր. աջ. հատված/ | |
| Բանկ՝ "Կոնվերսբանկ" ՓԲԸ Ավանի մասն. 193001221475010O | ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն 900011179083 |
| (Ա.[illegible]) | (Ա.Հակոբյան) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

# CERTIFICATE

This is to confirm that “Magas Invest” CJSC is the official distributor of Hyundai Motor Company in the Republic of Armenia and is authorized to sell cars manufactured in our company, as well as perform warranty and post-warranty services.

Name/Title Young Jin Lee/General manager

Hyundai Motor Company

stamp

HYUNDAI MOTOR COMPANY

現代自動車